ԱՐՏԱՇԱՏԻ «ԵՐԱԶԱՄՈՅՆ» ՎԱՅՐԻ ՏԱՃԱՐԸ ԵՎ ԿԻՑ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արտաշատի հնագիտական արշավախումբը 2007–2008 թթ. հունիս–հուլիս, հոկտեմբեր ամիսներին շարունակել է աշխատանքները քաղաքի հարավարևմտյան մասում՝ Արաքսից մոտ 70 մ հեռավորությամբ գտնվող բլրակի հարևանությամբ, երկրորդ հարթակի (I դ. երկրորդ կես) հարավարևելյան հատվածում 2006 թ. բացված հասարակական բաղնիքի երեք սենյակներին կից տարածքում: Հարթակի արևելյան պատը 36,30 մ հետո թեքվեց դեպի արևմուտք (7,8 մ): Պահպանվել է միայն պատի սև մարմարի խոշոր զանգվածներով երկու շարքը: Հարավարևելյան և հարավարևմտյան կողմում 2007 թ. պեղվել է ևս երեք սենյակ[1] (աղ. I, 1): Այստեղ նույնպես, նախորդ սենյակների նման, առկա է չորս շինարարական շրջան (II դ. վերջ – III դ. սկիզբ, IV դ. սկիզբ, V–VII դդ. և VIII– XVI դդ.):

Համալիրի այս հատվածի պատերի պահպանված բարձրությունը ներքին (առաջին) հատակից 2,5–4,35 մ է, լայնությունը՝ 80-90 սմ: Շինանյութը ճեղքված որձաքարն է, թրծած աղյուսը, որոշ պատերի մեջ կան գետաքարեր՝ շարված կրաշաղախի օգնությամբ: Սենյակների անկյունները և դռների բացվածքների երիզները շարված են լավ մշակված և հղկված կրաքարե խոշոր զանգվածներով: Ըստ պատերի մակերեսին պահպանված սվաղների, դրանք բաղկացած են կրաշաղախե ծեփի երկու շերտից առաջինը՝ 2–2,5 սմ հաստությամբ սպիտակ ավազախառնուրդով և երկրորդը՝ 0,5 սմ հաստությամբ նուրբ կրաշաղախով:

Բոլոր սենյակներն ունեն կրկնակի հատակ, այսինքն տաքացվել են: Ջեռուցումն իրականացվել է, այսպես կոչված, հիպոկաուստի (hipocaustum)՝ սյուների վրա կառուցված կրկնակի հատակի և պատերի միջոցով: Չորս անկյունում կոնաձև ելուստներ ունեցող (6–10 սմ) քառանկյուն աղյուսները ծայրերով ամրացվել են պատերին և ծածկվել սվաղով: Այս եղանակով ստացել են դատարկ տարածություն: Վառարանի տաք ծուխը պատերի ներքնամասում թողնված կամարակապ բացվածքների միջով թափանցել է հատակի և պատերի միջև եղած դատարկ տարածություն և տաքացրել տարածքը: Այդ ձևով տաքացվող սենյակների օդը ավելի հաճելի և առողջարար էր[2]:

Սենյակների ստորին հատակները պատրաստված են անջրաթափանց, բետոնե կարծր շաղախով: Ստորին հատակին դրվել է 20–22 սմ լայնությամբ, 4 սմ հաստությամբ թրծած կավե քառակուսի աղյուս, որի վրա կրա-

---

[1] *Չափագրությունները կատարել է արշավախմբի ճարտարապետ Ա. Գ. Կանեցյանը:*

[2] О. Ш у а з и. История архитектуры. Т. I. М., 1935, с. 477.



1.

2.

3.

Աղ. I

շաղախի օգնությամբ շարվել է նույն տրամագծի և հաստության սկավառակաձև 13 աղյուս (բարձր. 76 սմ), վերին մասում կրկին դրվել է քառակուսի մի աղյուս: Սյուներին կրաշաղախ քսելուց հետո, դրանց միմյանցից ունեցած հեռավորության համաձայն, շարել են (երկ. 62-65, լայն. 41–42 սմ, հաստ. 7–8 սմ) աղյուսներ, յուրաքանչյուր սյան վրա հենվել է նման չորս աղյուսի անկյուն, ապա ծածկվել է 2–3 սմ շաղախի շերտով և շարվել փոքր չափերի ու ավելի բարձր (50 (50 (4–5 սմ) աղյուսներ և այդ ամենը ծածկվել է կրի ավազի ու մանրած աղյուսի կամ կղմինդրի խառնուրդից պատրաստված 5–7 սմ հաստությամբ շաղախի շերտով: Ստորին և վերին հատակի բարձրությունը 1մ է: Եվ ստորին և վերին հատակի մակերեսը բաց վարդագույն է: Ըստ պահպանված հենասյուների, այդպիսին է առաջին, մեծ սենյակի (մոտ 75 քմ) հիպոկաուստի կառուցվածքը[3]: Նույնատիպ հենասյուներ ունեն II, III, V-VII սենյակները, իսկ IV սենյակի սյուները քառակուսի աղյուսներից են բաղկացած:

IV սենյակի հատակը հարդարված է խճանկարով, պահպանվել է հարավային կեսը (աղ. I, 3): Այն նման է II սենյակի խճանկարին: Պատրաստված է ֆիլգիտ քարի հատիկներով (0,7–1,2 սմ): Ընդհանուր ֆոնը սպիտակն է, վերցված սև սմալտայով (գունախճիկ) պատած հատիկներից կազմված ուղղանկյուն շրջանակի մեջ (ժապ. լայն. 8 սմ): Հարավային պատին կից, ուղղակի խճանկարի վրա, թրծած խոշոր (41 (65 սմ, 50 (50 սմ) աղյուսներով, բետոնե շաղախով պատրաստված է ուղղանկյուն ավազան (լողատաշտ, 80 x 212 սմ, պատերի լայն. 50 սմ, աղ. I, 3): Հավանաբար, այն ծառայել է տաք ջրով լողանալու, լոգանք ընդունելու համար: Բաղնիքներին բնորոշ էին նաև առանձին հատվածներում անհատական վաննաների տեղադրումը: Տաք ջրի լոգանքներ ընդունելն առողջարար էր, հանգստացնող: Վերոհիշյալը նման լողատաշտերից մեկն է:

IV սենյակի խճանկարով հատվածը հարավից դեպի հյուսիս 5 սմ թեքություն ունի, մինչև դիմացի պատը այն կկազմեր 10 սմ: Այս սենյակի հարավային պատի հետևում բացվեց քառանկյուն կրակարան (լայն. 109 սմ, խոր. 120 սմ): Այն մեկ անգամ ևս վկայում է, որ յուրաքանչյուր սենյակ ունի առանձին կրակարան:

V սենյակի արևելյան պատին կիսակլոր խորշ է պատրաստված (լայն. 165 սմ, խոր. 90), որի պատերը թրծած աղյուսներով են շարված (50 (50 (5 սմ): Հատակը և պատերը սվաղված են անջրաթափանց շաղախով (աղ. II, 2): Հատակը, արևմտյան ցածր պատին կից, կենտրոնում, ջրահեռացման համար ծագարաձև անցք ունի: Այն, հավանաբար, ծառայել է սառը ջրով լողանալու համար: Խորշի առջևով անցնում է աղյուսներով պատրաստված առվակ (լայն. 18 սմ, խոր. 18 սմ), որը սկիզբ է առնում սենյակի հյուսիսարևելյան դռան բացվածքից, որտեղ այն լայնանում է (60 (50 սմ), ու իր մեջ ընդունելով II և IV սենյակներից եկող ջրերը գնում է դեպի հարավարևելյան պատը, միախառնվելով հարավ-արևելքից եկող առվակին, հոսում է դուրս:

---

[3] *Ժ. Խաչատրյան. Նորահայտ մոնումենտալ շինություններ Արտաշատից.– «Էջմիածին», հունվար, 2007, էջ 36–37:*

Հյուսիսարևելյան դռան շեմին (լայն. 60 սմ) IV դ. վերաբերող շարվածքը հեռացնելուց հետո բացվեց II դ. վերջի – III դ. առաջին քառորդին պատկանող մուտքը, որն ավելի լայն է (1,05 սմ), պահպանվել է նախորդ շերտի խճանկարը (աղ. II, 1): Այն նույնպես պատրաստված է ֆիլզիտից, բաց ուղղանկյուն սև շրջանակի մեջ (լայն. 57 սմ) սպիտակ ֆոնի վրա սև ժապավենով շեղանկյունի է պատկերված, որի կենտրոնում սևով, ավելի փոքր շեղանկյունի է, իսկ սուր եզրերի կողքերին սևով ուղղանկյուն եռանկյունիներ: Նման երկրաչափական զարդերով խճանկար բացվել է Փոքր Ասիայի հարավարևելյան հատվածում, Կիլիկիայի Անեմուրիում (Eski Anamur) քաղաքի մեծ բաղնիքի սառը ջրով լողանալու (frigidarium) սենյակի մուտքի շեմին, որն ի տարբերություն Արտաշատի խճանկարի, շեղանկյուն և ուղղանկյուն զարդերն արված են մուգ կապույտ ֆոնի վրա սպիտակով: Այն թվագրվում է III դ. երրորդ քառորդով[4]:

V սենյակի աստիճանաձև նեղացող արևմտյան պատին (լայն. 350 սմ) կողք կողքի, թրծած աղյուսներով պատրաստված կամարաձև երկու խորշ կա:

Հարավարևելյան դռան բացվածքի եզրին, 50 սմ բարձրության հողի վրա (ոչ իր տեղում) հայտնաբերվել է կրաքարե (բարձր. 50 սմ, լայն. 50 (50 սմ), մի կողմում գլանաձև երկու անցքով քար (տրամ. 14 սմ), որոնց մեջ պահպանվել է կավե խողովակի 10 սմ հատվածը: Նման ամբողջական երրորդ քարը բացվել է VI սենյակի կրակարանի հարևանությամբ, նեղ ու երկար միջանցքի ծայրին: Այն վերին մասում ունի երեք անցք: Ուշագրավ է հարավարևմտյան կողմին կցված քառանկյուն փոքր կրաքարը, որը մի կողմում եղած գլանաձև լայն անցքով միացած է վերոհիշյալ քարի անցքին, իսկ վերին մասում ունի քառանկյուն փոքրիկ անցք (լայն. 17 (19 սմ, բարձր. 4,5 սմ, փոքր անցքի տրամ. 2,3 սմ), որի վրա, հավանաբար, միացվել է ջրի մետաղյա խողովակը (աղ. II, 3):

V–VII սենյակները միացնող դռան բացվածքի շեմին տեղադրված է կրաքարե ամբողջական լավ հղկած սալ, որի արևմտյան եզրին թեք կտրված անցք է թողնված: Այստեղից սկսվող կավե փոքր տրամագծի խողովակաշարը (խողովակի տրամ. 7 x 13 սմ, երկ. 38 սմ) պտույտ տալով, դռան բացվածքով, կրաքարե ջրբաժանով երկու մասի է բաժանվում, մեկը թեքվում է դեպի հարավ, մյուսը գնում է դեպի հյուսիս-արևմուտք (աղ. II, 4):

2008 թ. բացվել է երկրորդ կավե խողովակաշարը IX սենյակի հարավային պատի դրսի կողմից (3,8 մ), հարավարևելյան անկյունից պտտվելով արևելյան պատի երկայնքով գնում միանում է III սենյակի արևելյան պատին կպած քառակուսի կրաքարի հարավային կողմի անցքին և, դուրս գալով վերին մասի գլանաձև անցքով, միանում է արևելյան պատի մեջ տեղադրված կավե խողովակին (աղ. III, 3): Շարունակում են հանդիպել քառանկյուն խողովակներ, նեղ եզրերին ուղղանկյուն բացվածքներով և ջրահեռացման լայն ու հաստ խեցիով կիսախողովակներ: Վերջիններս բնորոշ են հիպոկաուստով հռոմեական տիպի բաղնիքներին[5]: Ի դեպ, գլանաձև երեք անցքով կրաքարեր հայտնի են Օրոնտեսի վրայի Անտիոքում բաց-

[4] J. R u s s e l l. Mosaic Inscriptions from the Palaestra at Anemurium.– Anatolian Studies, vol. XXIV, 1974, p. 98-102, Fig. 4

[5] J o s e f D u r m. Die Baustile historische und technische Entickelung des handbuches der architekture. Bd 2. Stuttgart, 1905, Taf. 194, *նկ. 354, երկ. 55-56 սմ, լայն. 18 սմ, խոր. 10 սմ:*

ված բաղնիքի հյուսիսարևելյան պատին կից, որի կողքերից միանում են չորս խողովակաշար և 24-րդ սենյակում 4-րդ սենյակի աբսիդայի հարևանությամբ, որին միանում են հինգ խողովակաշար[6]: Անտիոքում հայտնաբերվել է նաև Արտաշատի VI սենյակի ջրբաժանի նման խողովակաշարով մի կրաքար[7]: Այսինքն, ինչպես Անտիոքի գլանաձև անցքերով կրաքարերը, այնպես էլ Արտաշատինը ջրամատակարարման համակարգի մաս են կազմել:

VI սենյակի հարավարևմտյան մասում, աստիճանաձև լայնացող պատի անկյունում բացվել է կրաքարե սալերով պատրաստված քառանկյուն հոր (լայն. 75 սմ, երկ. 90–113 սմ, խոր. 85 սմ), որը մի կողմով միանում է հյուսիսարևմուտք ուղղության վերոհիշյալ տաք ծխի անցման կամարաձև անցքին (բարձր. 67 սմ, լայն. 46 սմ): Հատակը պատած է եղել խճանկարով: Սենյակի հարավային պատը տձև կիսակլոր է, որով անջատվել է վառարանից: Սենյակի մակերեսը 12,6 քմ է (աղ. II, 4): Այն եղել է շոգեբաղնիս:

VII սենյակի պեղումները նույնպես շատ արդյունավետ եղան: Ստուգումները ցույց տվեցին, որ այստեղ առկա են երեք շերտի վերաբերող հատակներ: Վերին հատակից հայտնաբերվել են մեծ քանակությամբ խճանկարի հատիկներ և կարմիր սերդոլիկից պատրաստված մատանու փոքրիկ ակ (12 (10 (20 մմ): Օվալաձև հարթ մակերեսին պատկերված է հողի մակերեսը խորհրդանշող հորիզոնական գծի վրա, դեպի ձախ կանգնած Տիխե-Ֆորտունան (առջևի մասը վնասված է), որը աջ ձեռքով բռնել է նավի ղեկը (ռուլը, պահպանվել է ղեկի ներքին կեսը), իսկ ձախով՝ առատության եղջյուրը: Նրա հետևում կանգնած հաղթանակի թևավոր աստվածուհի Նիկա-Վիկտորիան, ձախ ձեռքով բռնած դափնեպսակը մեկնել է դեպի Տիխեի գլուխը, աջով՝ ուսին դրված արմավենու ճյուղը (աղ. III, 4): Պատկերը դինամիկ է, ունի հելլենիստական արվեստին բնորոշ մշակում: Հիանալի ընդգծված է Տիխեի աշտարակաձև թագը, նրա և Նիկայի հագուստի ուղղահայաց և թեք ծալքերը, առատության եղջյուրը, Նիկայի թևերն ու ճյուղի նուրբ տերևները, ուշ հելլենիստական շրջանին բնորոշ մազերի գեղեցիկ սանրվածքը ("Melonen frisur"-ի ձևով), որի կոսը բարձր է, նման Արտաշատի մ. թ. ա. I դ. չորրորդ քառորդին պատկանող դամբարանից հայտնաբերված Կլեոպատրա Սելենեի արձանիկի սանրվածքին[8]:

Տիխեի պաշտամունքը լայնորեն տարածված էր հելլենիստական դարաշրջանում: Նա մի շարք քաղաքների հովանավորն[9] էր (Անտիոք, Ալեքսանդրիա և այլն):

---

[6] Antioch on-the-Orontes, I, The Excavations of 1932: Edited by George W. Elderkin, 1934 Princeton, London: The Hague: P. 10,11; Fig. 5,7, Antioch on-the-Orontes. III, p. 26, Fig. 29

[7] Antioch on-the-Orontes. II, p. 18, 19, Fig. 16, 17

[8] Ж. Д. Х а ч а т р я н. Новые памятники античного искусства из Арташата.– Вестник общественных наук АН АрмССР (ВОН), 1996, № 1, с. 116-117, рис. 4-5; *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների լույսի ներքո.– ՊԲՀ, 2007, № 2, էջ 31, աղ. X3,* Ž. D. K h a c h a t r i a n. Artaxata capitale dell' Armenia antica (II sec. A.C.- IV sec.D.C.).– Ai piedi dellю Ararat Artaxata E LюArmenia Ellenistico-Romana, a cura di Antonio Invernizzi. Torino, 1998, p. 143, Fig. 84a-b-c.

[9] *Դիցաբանական բառարան (կազմեցին Մ. Ն. Բոտվիննիկ, Մ. Ա Կոգան, Մ. Բ. Ռաբինովիչ, Բ. Ժ. Սելեցկի, թարգմ.՝ Ս. Մ. Կրկյաշարյանը), Երևան, 1985, էջ 237:*

Անահիտը՝ իբրև Արտաշատ մայրաքաղաքի հովանավոր, համադրվել է Տիխեի հետ, որի արձանը Սելևկյանների օրոք կանգնեցվել է Անտիոքի մոտ, բարձունքի վրա, Օրոնտես գետի ափին: Տիգրանի կողմից Անտիոքը գրավելուց հետո դրամների դարձերեսին հաճախ դրոշմվում է նրա կերպարը՝ ժայռաբեկորի վրա բազմած, ձեռքին արմավենու ճյուղ, իսկ գլխին աշտարակաձև թագ[10]: Անահիտը նման թագով պատկերված է Արտաշատի քաղաքային դրամի դիմերեսին[11] (մ. թ. 2-6 թթ.):

Նիկայի թագավորին դափնեպսակ մատուցելու մոտիվը նույնպես լայնորեն տարածված էր հելլենիստական արվեստում: Այն Պարթևստանում և Հայաստանում ամենասիրված թեմաներից մեկն էր: Իսկ Նիկան Հայաստանում ու իրանական աշխարհում կարող էր նույնացվել միայն Անահիտի հետ: Ուշագրավ է, որ Նիսայի կնիքներից մի քանիսի վրա պատկերված պարթևական հեծյալ թագավորին Նիկան է դափնեպսակով պսակադրում կամ արմավենու ճյուղ մատուցում[12]: Սասանյան քանդակների ծիսական տեսարաններում իշխանության ու հաղթանակի խորհրդանշան դափնեպսակը արքային է հանձնում Անահիտ աստվածուհին[13]: Նիկան Հայաստանում պատկերվել է Արտաշատի քաղաքային դրամի դարձերեսին՝ դեպի ձախ քայլող հաղթանակի դիցուհին աջ ձեռքին բռնած դափնեպսակը առաջ պարզած, ձախում՝ արմավենու ճյուղը, «Արտաշատ մայրաքաղաքի» հունարեն արձանագրությամբ[14]: Այն պատկերվել է նաև հայ թագավորների դրամների դարձերեսին և դափնեպսակով ու արմավենու ճյուղով[15], ինչպես նաև կնիքների ու Միսիանի արծաթե ոսկեջրած մեդալիոնի վրա[16]:

2008 թ. պեղվել է նաև IV սենյակի արևելյան հատվածը, որտեղ բացվել է երկու սենյակ՝ VIII և IX (աղ. III, 5): VIII սենյակի (երկ. 6,85 մ. լայն. 3,7)

---

[10] Б. Н. А р а к е л я н. Очерки по истории искусства древней Армении (VI в. до н. э. – III в. н. э.). Ереван, *1976,* Табл. LXXIV, LXXV; *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Անահիտ դիցուհու պաշտամունքն ու պատկերագրությունը Հայաստանում և նրա աղերսները հելլենիստական աշխարհի հետ.– ՊԲՀ, 1985, № 1, էջ 130, աղ. I,₆:*

[11] *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Անահիտ դիցուհու պաշտամունքն..., էջ 130, Աղ. I, 3;* Р. Е. В а р д а н я н. К вопросу о датировке двух групп армянских монет эллинистической эпохи.– ИФЖ, *1987, №2,* с. *201-207; Խ. Ա. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. Հին Հայաստանի դրամային շրջանառության պատմությունից (մ. թ. ա. IV դ. վերջերից մինչև մ. թ. III դարի սկիզբը).– ՊԲՀ, 1970, № 3, էջ 92-93:*

[12] Г. А. К о ш е л е н к о. Родина парфян. М., 1977, с. 139–140.

[13] H. L u s c h e y. Zur Datierung der Sasanidische Kapitalle, aus Bisitun und der Monuments von Tak-i-Bostan.– Archeologische Mitteilunge aus Iran. New Folge, Bd. I, B., 1966. S. 129-142, Taf. 51-54.

[14] Р. Е. В а р д а н я н. Указ. раб., с. 200–207.

[15] *Խ. Ա. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. նշվ. աշխ., էջ 71-73, Ռ. Վ ա ր դ ա ն յ ա ն. Արտավազդ II-ի դիմապատկերի պատկերագրական մի տարրի մասին.– Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր, Երևան, 2001, էջ 66:*

[16] А. Б. М а н у к я н. Глиптика древней Армении (VI до н. э. – III в н. э.).– Автореферат дисс. на соискание ученой степени канд. историч. наук. Ереван, 1992, с. 19; *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 130, աղ. I,₁:*

1.

2.

3.

4.



5.

6.

Աղ. II

հարավարևելյան պատին IX սենյակ տանող դռան բացվածքը պատած է սպիտակ խճանկարով: VIII սենյակի վերին հատակը չի պահպանվել: Հողի լիցքից հայտնաբերվեցին կավե և ապակե անոթների բեկորներ, երկաթյա գամեր, դանակի մասեր, հատակի խճանկարով բեկորներ և հատիկներ մանրահատիկ մարմարային օնիքսից պատրաստված թռչնի թևերի երկու հատված՝ երկուսն էլ հայտնաբերվել է IX սենյակում: Փետուրներն ունեն մանրամասն, կատարյալ մշակում: Մակերեսը լավ փայլեցված է: Դրանք, անշուշտ, հաղթանակի աստվածուհի Վիկտորիայի թևերն են: Քարը տեղական է, Արարատի տրավերտինի հանքավայրում հանդիպող: Այսինքն արձանը պատրաստվել է Արտաշատում (աղ. II, 5, III, 1):

Հայտնաբերվել է նաև կանացի փոքրիկ ոտնաթաթ, որը պատրաստված է սպիտակ, շատ նուրբ հատիկային մարմարից: Այն ունի (երկ. 10,2 սմ, մատների հատվածում լայն. 4 սմ) հելլենիստական արվեստին բնորոշ, ռեալիստական մանրակրկիտ մշակում: Պահպանված են համաչափությունները, մանրամասն տրված են ոտքի երկար գեղեցիկ մատները, եղունգները: Մակերեսը լավ փայլեցված է: Մարմարի հանքաքարը հայտնի է Սուրենավանում, ավելի որակյալը Արցախում՝ Դաղիվանքում: Այսինքն այն ևս տեղական քար է և ոտքը (արձանը) պատրաստվել է Արտաշատում (աղ. II, 6):

Սենյակի հյուսիսային կեսում, հյուսիսարևելյան կողմում բացվեց կրակարանը, որը վառվել է III սենյակից:

Ամենաուշագրավը VIII սենյակի հարավային կեսում ներճկված վիճակում պահպանված վերին հատակի խճանկարն է, որը թույլ է տալիս վերականգնել խճանկարի հորինվածքի ընդհանուր պատկերը: Նրա թեման, նախշերի վերակազմությունը, երկրաչափական և այլ տիպի օրնամենտներն, իրենց բաղադրիչ մասերով հիշեցնում են գորգային հարուստ զարդերը (Աղ. III, 2): Բազմագույն գեղեցիկ պատկերը, համաչափ դասավորված մանրամասներով, շքեղ տպավորություն է թողնում: Սպիտակ, համեմատաբար խոշոր հատիկներով շարված եզրային հատվածին հաջորդում է լայն, ուղղանկյուն մուգ կապույտով արված շրջանակ, շեղանկյուն և ուղղանկյուն երկրաչափական զարդերով: Դրան հաջորդում է քառակուսի, ոճավորված պարանահյուսքով շրջանակի մեջ վերցված իրար հետ միահյուսված վեց շրջան: Բոլոր օղակներն ունեն իրենց երիզանախշերը: Վերջիններս առանձին են օղակից և, վերին մասում հյուսվելով, վերածվում են ութանման հյուսված երեք զարդի: Երիզանախշի ներքևում օղակներն ունեն երեք տեսակի ժապավենաձև, ալիքաձև զարդաշարան, որը խորհրդանշում է ծովի հանգիստ վիճակը, և ոլորուն ծայրով նախշեր, որն ալեկոծվող ծով է նշանակում: Հետաքրքիր են քառակուսու անկյուններում պատկերված երկսայրի սակրերը՝ իրենց կոթառով: Երկբերան սակրի մասին մի հիշատակություն ունի Մովսես Խորենացին[17]՝ կապված պաշարված Տիգրանակերտի (359 թ.) պարիսպների հիմքերը քանդելու հետ: Խճանկարի հորինվածքը աչքի է ընկնում իր բազմազանությամբ, կուռ կառուցվածքով, զարդերի հարստությամբ:

---

[17] *Մ ո վ ս է ս Խ ո ր է ն ա ց ի. Պատմութիւն հայոց, քննական բնագիրը և ներածութիւն Մ. Աբեղյանի և Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, III, ԻԸ:*

IX սենյակի (երկ. 6,10 մ, երկ. աբսիդայով 7,25 մ, լայն. 4,20 մ) վերին հատակը չի պահպանվել: Գտնվել են վերին հատակի տարբեր մեծության մասեր, հաճախ բազմագույն կամ սպիտակ խճանկարով:

IX սենյակը VIII հետ հաղորդակցվող դռան բացվածքի սպիտակ խճանկարով պատած շեմի կրաքարե սալի տակ ծխի համար անցք է թողնված: Նման մի անցք էլ կա նույն պատի հյուսիսայի մասում: Կրակարանի կամարաձև շարված երրորդ անցքն էլ առկա է հյուսիսային պատի կենտրոնական ներքնամասում, որը III սենյակի կողմից բացվել էր դեռևս 2006 թ.: Այսինքն՝ VIII և IX սենյակները, բացի III սենյակի կրակարանից, իրար հետ անցքեր ունեն նաև միջնապատի վրա: Հնարավոր է, այս երկու սենյակները նախապես մեկ կրակարանով են տաքացվել կամ երկու կրակարանն էլ օգտագործվել են միաժամանակ՝ ջերմությունը մի մակարդակի վրա պահելու համար:

Ի տարբերություն VIII սենյակի, IX սենյակն ունի աբսիդա (խոր. 1,20 մ, լայն. 2 մ), որը կանգուն է (աղ. III, 6): Այն հետագայում վերանորոգման ժամանակ ուղղանկյուն է դարձվել և վրան ավազան (լոդատաշտ) է սարքվել (երկ. 2 մ, լայն. 1,4 մ): Վերջինիս պատերի մեջ պահպանվել են սենյակը տաքացնելու համար տեղադրված ուղղանկյուն խողովակները (նեղ ճակատներին), կոնաձև 3 և 4 ելուստներով ուղղանկյուն աղյուսները (հարավային պատին): Աբսիդայի հիպոկաուստի սյուները ուղղանկյուն, սկավառակաձև աղյուսներից են և կրաքարերից (3 հատ), ինչպիսին կար Արտաշատի VIII բլրի բաղնիքում, և հայտնի է Փառախոտից[18]: IX սենյակի սյուները հիմնականում VIII սենյակում եղած վերոհիշյալ կավե խողովակներից են և ուղղանկյուն ու սկավառակաձև աղյուսներից: Հյուսիսային պատի կամարաձև անցքի կողքերին շարված են ցածր պատեր՝ տաք ջրի կաթսայի համար: Արևելյան պատի վրա կա լայն ուղղանկյուն խորշ, որը ծածկված է եղել որմնանկարներով: Այստեղ, հավանաբար, տեղադրվել է բարձրաքանդակ (խոր. 40 սմ, լայն. 2 մ): Սրա և աբսիդայի միջև կիսակլոր լայն որմնախորշ է (լայն. 2,5 մ, խոր. 75 սմ) պատրաստված, որի հատակին պահպանվել է արձանի շրջանաձև պատվանդանը (տրամ. 35 սմ): Որմնախորշը ծածկված է բաց կարմրավուն ներկով (աղ. IV, 2):

IX սենյակից հայտնաբերվել է երկու բրոնզե դրամ, մեկը շատ քայքայված վիճակում, երկրորդը լավ պահպանված: Վերջինը Տրայանոսի դրամն է, Գալատիայում, 99/100 թ. թողարկված[19]:

Ուշադրության արժանի է այս սենյակի խճանկարը, որը նույնպես բազմագույն է: Այն թեև մեզ է հասել բեկորային վիճակում, սակայն ունեցել է շատ հարուստ հորինվածք: Եզրային մասը պատրաստված է եղել ֆիլզիտի սպիտակ, համեմատաբար խոշոր հատիկներով: Պատկերներն արված են կանաչ, վարդագույն, սպիտակ, սև, դեղնավուն սմալտայով: Այստեղ, ըստ պատկերի մասերի, օգտագործվել են տարբեր ձևերի ու չափերի հատիկներ, հաճախ այնքան մանր, որ կարելի է շա-

[18] А. А. И в а н о в с к и й. По Закавказью.– Материалы по археологии Кавказа, вып. VI. М., 1911, с. 38, рис. 2с.

[19] *Դրամը որոշել է դրամագետ Ռուբեն Վարդանյանը:*



1.



2.

3.

4.

5.

6.

Աղ. III

րել միայն փոքրիկ ունելիով: Ի տարբերություն VIII սենյակի խճանկարի, այստեղ գտնվել է մարդու դեմքի մի հատված՝ աջ աչքով, ճակատի մի մասով և մազերով, քթով ու բերանով: Մեկ այլ բեկորի վրա պահպանվել է սևով գրված լատիներեն արձանագրության բառը (VER), որը նշանակում է գարուն[20], մեանդրի տարբեր ձևեր, ծաղիկներ և այլ զարդեր (աղ. IV, 1): Ի դեպ, Արտաշատում մեանդրն իր կիրառությունն է գտել նաև բնակարանների ինտերյերների որմնանկարներում (VIII բլուր): VIII և IX սենյակների խճանկարները հասարակական բաղնիքի սկզբնական շրջանի հորինվածքներից են և կարող են թվագրվել II դ. վերջով և III դ. սկզբով: Դրանք Հայաստանում հայտնաբերված երկրորդ խճանկարն են, բայց մակերեսով շատ ավելի մեծ ու ավելի հին, քան Գառնիի խճանկարը: Ըստ որում երկուսն էլ պատկանում են անտիոքյան դպրոցին: Հայտնի է, որ կային խճանկար պատրաստող շրջիկ վարպետներ: V սենյակի շեմի շեղանկյունաձև զարդերով խճանկարը նույնպես պատկանում է բաղնիքի առաջին շերտին՝ III դ. սկզբին, իսկ մյուս խճանկարները, որոնք նույն ոճի են, վերաբերում են IV դ. սկզբին:

2008 թ. ավարտվել են նաև III սենյակի պեղումները, որի արևելյան մասի գրեթե կեսը պեղված չէր: Հեռացվել են այս հատվածի XIII–XVI դդ. կառույցների մնացորդները, որից հետո այն ստացել է իր նախնական տեսքը: Պարզվեց, որ III սենյակի միջոցով տաքացվել են I, II, VIII, IX սենյակները, որտեղ դրանց կամարաձև բացվածքով կրակարաններն են:

Ամբողջացվել են նաև փոքրիկ խորանով X սենյակի աշխատանքները: Այն եղել է աղոթատեղի, և ունեցել է զոհասեղան, որը հայտնաբերվել է III սենյակի նոր բացված հարավարևելյան անկյունում: Հասարակական բաղնիքներն ունեցել են նաև իրենց պաշտամունքային սենյակները:

Հելլենիստական հարթակի արևելյան պատի դիմաց բացվել են մեծ սրահի հարավային, արևմտյան և հյուսիսային պատերը, ներսում երկու շարքով շարված յոթ քառանկյուն մույթեր (1 (1,20 մ), ութերորդը դեռևս չի մաքրվել: Դրանք բոլոր կողմերից ծածկված են բազմագույն որմնանկարներով:

Ուշագրավ են IX սենյակի հարավարևելյան պատի անկյան դրսի կողմից հայտնաբերված I–II դդ. խեցեղենի՝ սկուտեղների, ափսեի, թասերի բեկորները և հատկապես կապտականաչավուն (ակվամարինի) գույնի, թափանցիկ ապակուց, կաղապարի մեջ սեղմելու եղանակով պատրաստված կիսագնդաձև թասի (փիալայի) մասերը, որոնք տալիս են ամբողջի ձևը (տրամ. 14 սմ, բաձր. 6,5 սմ): Այն դրսից հարդարված է ուղղահայաց ռելիեֆ զարդերով (Rippenschale), որոնք հատակից դեպի վեր աստիճանաբար բարձրանում և լայնանում են:

Գտնվել են բազալտե կոնաձև երկանքի վերին քար, ուշ անտիկ շրջանի խեցեղենի բեկորներ, եռատերև ընդգծված պսակով, ներճկված կանթով սափորներ, ապակե սրվակների և թասերի բեկորներ, որոնցից մեկը կաղապարի մեջ պատրաստված բազմանկյուն զարդերով (վաղ միջնադարյան), IV–V դդ. կովկիթներ, մեծ ու փոքր կճուճներ, լայն շրթերի վրա փորագիր զարդերով տաշտեր և այլն, որոնք իրենց զուգահեռներն ունեն VIII բլրի խեցեղեն արտադրանքում: Հայտնա-

[20] З. А. П о к р о в с к а я, Н. Л. К а ц м а н. Учебник латинского языка. М., 1981.

բերված շինարարական խեցեղենի մեջ մեծ թիվ են կազմում կոմինդրներն ու թրծած աղյուսները, խողովակներն ու հաստ խեցիով ջրահեռացման կիսախողովակները:

Ուշագրավ են X–XVII դդ. պատկանող նյութերը, կարմիր և բաց դարչնագույն կավից պատրաստված, անջնարակ փորագիր զարդերով և ջնարակած բազմատեսակ հարուստ խեցեղենը, որոնք վկայում են համալիրի երկարատև գոյության մասին: Պատերի մի մասի մեջ նկատելի են այդ շրջանին վերաբերող սև և կարմիր տուֆ քարերով կատարված վերանորոգման հետքեր:

Թերմերը (հուն. տաք բաղնիք), ընտանեկան և հասարակական բաղնիքները ամենասիրված վայրերից մեկն էին: Հունական քաղաքներում, սակայն, դրանց թիվը չնչին էր: Մինչդեռ հռոմեացիների մոտ, սկսած ուշ հանրապետական և հատկապես կայսերական շրջանում, դրանք մեծ մասսայականություն էին վայելում[21]: Մ. թ. ա. I դ. եթե դրանց թիվը ընդամենը 170 էր, ապա մ. թ. IVդ. 900–1000 էր հասել: Լողանալը դարձել էր ծես: Այն որոշակի տեղ էր զբաղեցնում օրվա ապրելակարգում[22] (ռեժիմ): Մարդիկ օրվա առաջին կեսն զբաղվում էին գործնական հարցերով, երկրորդ կեսն անցկացնում էին հասարակական բաղնիքներում[23]: Սպորտի և առողջության (հիգիենայի) խնդիրների լուծման համար բաղնիքներում անհրաժեշտ էին համապատասխան բաժանմունքներ՝ դահլիճ կամ հրապարակ սպորտով զբաղվելու համար (palestra), հանդերձարան (apodyterium), տաք բաղնիք (caldarium), միջին տաքության, գոլ բաղնիք (tepidarium), սառը բաղնիք (frigidarium), ջրավազան (natatio)[24]: Բաղնիքում, ըստ վճարի չափի, սպասարկողներ կային, որոնք լողացնում էին հատուկ էսենցիաներով (բնահյութերով), մերսում էին, օծանելիքներ քսում, հրամցնում էին տարբեր ուտելիքներ, խմիչքներ և այլն[25]:

Հայտնաբերված անտիկ բաղնիքներում միշտ չէ, որ պահպանվել են ընդունված ընդհանուր կաղապարները. դա հատկապես վերաբերում է ըստ նշանակության սենյակների դասավորությանը[26]: Հաճախ նորամուծություններ էին կատարվում՝ պահպանելով հիմնական սկզբունքները: Այս ամենից ելնելով՝ կարևորվում էր բաղնիքների դեկորատիվ ձևավորումը: Բացի հատակները կամ առաստաղները խճանկարով հարդարելուց, զարդարում էին նաև արձաններով, առանձին կանգնեցված սյուներով, որոնք, ինչպես Սենեկան է նշում[27], ոչինչ չէին պահում, այլ ձևական էին, կանգնեցվում էին սոսկ իբրև զարդարանք: Հռոմում, օրինակ, Տիտոսի հասարակական բաղնիքի ավերակներում հայտնաբերվել է այնպիսի նշանավոր արձանախումբ, ինչպիսին Ագեսանդրոսի, Պոլիդորոսի և Աֆինոդորոսի

---

[21] Г. С. К н а б е. Древний Рим–история и повседневность. М., 1986, с. 42.

[22] М. Е. С е р г е е н к о. Жизнь древнего Рима. Очерки быта. М.–Л., 1964, с. 145; Г. С. К н а б е. *Նշվ. աշխ., էջ 47,* И. А. Б а р т е н е в, В. Н. Б а т а ж к о в а. Очерки истории архитектурных стилей. М., 1983, с. 46.

[23] *Նույն տեղում:*

[24] Словарь античности. М., 1984, с. 572.

[25] *Նույն տեղում, էջ 70–71:*

[26] L. C h a r i t o n i d i s, R. G i n o u v e s. “Bain romain de Zeuegolatio”.– Bulletin de correspondance héllenique, V. LXXIX, 1955, I, Paris, p. 110, note № 4; Г. А. Т и р а ц я н. *Նշվ. աշխ., էջ 273:*

[27] С е н е к а. Нравственные письма к Луцилию. М., 1977, LXXXVI, 8, 11.

(մ. թ. ա. II), «Լաոկոոնը որդիների հետ» պատկերաքանդակն է: Նրա հորինվածքը և գլխավոր քանդակի ռելիեֆի բնույթն ու դիրքը ընդօրինակված են Պերգամոնի զոհասեղանի ծոփորից (ֆրիզ), Ալկիոնեի հսկայի քանդակից (մ. թ. ա. 180 թ.): Լաոկոոնը և բելվեդերյան Ապոլոնի արձանը երկար ժամանակ համարվում էին հունական արվեստի գլուխգործոցները[28]: Ըստ V և IX սենյակների պատերին եղած խորշերի (խորանների) և պատվանդանների (աղ. IV, 2), ինչպես նաև VIII–IX սենյակներում հայտնաբերված Վիկտորիայի օնիքսից պատրաստված թևերի բեկորները (4), սպիտակ մարմարե կանացի փոքրիկ ոտքը վկայում են, որ Արտաշատի բաղնիքը նույնպես հարդարված է եղել քանդակներով ու բարձրաքանդակներով:

Բաղնիքի համալիրի տարածքի հողի լիցքից հայտնաբերվել են տաճարին պատկանող մշակված քարեր, տարբեր չափերի զանազան քանդակներով բեկորներ: Ուշագրավ է համալիրի հարավային հատվածում հայտնաբերված անտաբլեմենտի մասը, հավանաբար քիվի (ատամները չեն պահպանվել), որոնք հարդարված են ռելիեֆ ծառ հիշեցնող վեր բարձրացող երեք ոլորուն ճյուղերով (աղ. IV, 3): Հախ կողմում նկատելի է եռանկյունի պատվանդան, թե դրա վերևում ի՞նչ է եղել, դժվար է ասել: Հարավարևելյան անկյունի հողի լիցքից գտնվել է տաճարի անտի քար (երկ. 93 սմ), որը ցույց է տալիս տաճարի պատի լայնությունը (աղ. IV, 6): Նրա երկու ճակատը հարդարված է կիսաշրջանաձև և վահանաձև ռելիեֆ զարդերով (աղ. V, 4): Տաճարի շինաքարերից շատերն ունեն ուղղանկյուն և քառակուսի փոսիկներ, որոնք վկայում են քարերն իրար հետ ուղղահայաց ամրացնելու մասին:

Հելլենիստական հարթակի հյուսիսարևելյան հատվածում, քառաշար պատի դիմաց, միջնադարյան պատի հիմքում բացվել է առվակոսներով 1–1,5 մ բարձրության, 64–72 սմ տրամագծով 14 գլան (սյուն): Երկար ժամանակ մնալով խոնավ կավահողի մեջ՝ մասամբ ատամները մաշվել, հարթվել են (աղ. IV, 3, 5): Նման սյան բեկորներ հայտնաբերվել են նաև նախորդ տարիներին՝ հելլենիստական հարթակի հյուսիսային կողմի լիցքից և բաղնիքից[29]: Այսինքն՝ Արտաշատում եղել են նման սյուներով կառույցներ, և կավե ու բրոնզե արձանիկներ կերտող վարպետները վերարտադրել են դրանց ճարտարապետական ձևերը: Հայտնաբերվել են նաև արխիտրավի մի բեկոր, կրաքարե ռելիեֆ քանդակներով հարդարանքի գեղեցիկ բեկորներ, ատտիկյան մեծ տրամագծի խարսխի հատված, կորնթոսյան խոյակի գեղեցիկ բեկոր (աղ. IV, 4), որը տարբերվում է 2006 թ. հայտնաբերված բեկորներից[30]:

---

[28] История искусства зарубежных стран. М., 1980, с. 153–154, рис. 309.

[29] *Ժ. Խաչատրյան. Մոնումենտալ կառույցի մնացորդներ և ուշագրավ ծեսով թաղում Արտաշատից.– ՊԲՀ, 2005, № 2, էջ 220, նկ. 12, նույնի՝ Նորահայտ մոնումենտալ շինություններ Արտաշատից..., էջ 42:*

[30] *Ժ. Խաչատրյան. Նորահայտ մոնումենտալ շինություններ Արտաշատից..., էջ 39*



1.

2.

3.

4.

5

6.

Աղ. IV

Այսպիսով, կասկածից վեր է, որ այստեղ է մեր ենթադրած «Երազամոյն» վայրի Արեգ–Միհր–Ապոլոն–Հերմես–Տիրի տաճարը[31]:

Մովսես Խորենացին ասում է, որ Արտաշեսը «... գտեալ յԱսիայ պղնձաձոյլ ոսկեզօծ պատկերս զԱրտեմիդեայ և զՀերակլեայ և զԱպոլոնի՝ տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաւիր: Զոր առյալ քրմապետացն, որ էին յազգէն Վահունեաց՝ զԱպոլոնին և զԱրտեմիդեայն կանգնեցին յԱրմաւիր»[32], որտեղ Վաղարշակը Արեգակին և Լուսնին նվիրված մեհյան էր կառուցել. «... մեհեան շինեալ յԱրմաւիր՝ անդրիս հաստատէ արեգական և լուսնի և իւրոց նախնեացն»[33]: Այստեղից իրավացիորեն եզրակացրել են, որ Ապոլոնը Հայաստանում ևս նույնացվել է արևի հետ: Այնուհետև, Երվանդը մայրաքաղաքն Արմավիրից Երվանդաշատ է տեղափոխում, իսկ կուռքերի համար առանձին քաղաք է կառուցում՝ Բագարանը. «... նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, և անուանեաց Բագարան, այս ինքն թէ ի նմա զբագնաց յօրինեալ է զկազմութիւն. և փոխեաց անդր զամենայն զկուռսն որ յԱրմաւիր: Եւ մեհեանս շինեալ՝ զեղբայր իւր զԵրուազ քրմապետ կացուցաներ»[34]: Արտաշատի հիմնադրման ժամանակ Արտաշեսը Բագարանից Արտաշատ է տեղափոխում կուռքերին. «Երթեալ Արտաշեսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամօր, և հաճեալ ընդ բլուրն՝ շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ. Զեռնտու լինի նմա և Երասխ փայտիւք մարեաց. վասն որոյ անաշխատ և երագ շինեալ՝ կանգնէ ի նմա մեհեան, և փոխէ ի նա ի Բագարանէ զպատկերն Արտեմիդեայ և զամենայն կուռս հայրենիս. բայց զԱպաղոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնե հուպ ի ճանապարհն»[35], այսինքն, իբրև առևտրի աստված (քանի որ Ապոլոնը հունական աշխարհում վաղուց էր նույնացվել Հերմեսի հետ)՝ դրանով իսկ շեշտելով Արտաշատ մայրաքաղաքի առևտրական ուղղվածությունը:

Գ. Տիրացյանը գտնում է, որ Տիրը նախ համադրվել է Ապոլոնի և ապա Հերմեսը՝ Տիրի հետ: Եվ Արտաշատը, Արմավիրից հետո, Հայաստանում պատգամախոսարան ունեցող երկրորդ կենտրոնն է[36]:

Ագաթանգեղոսը վկայում է[37], որ քրիստոնեության տարածման ժամանակ թագավորն իր զորքով Վաղարշապատից գալիս է Արտաշատ՝ ավերելու Անահիտ դիցուհու բագինը և այն ամենը, որ «Երազամոյն» կոչված տեղում էր գտնվում: Նրանք ճանապարհին լինում են քրմական գիտության դպիր, Որմզդի գրչի Դիվան կոչված, ճարտարության ուսման, երազացույց, երազահան պաշտամունքի

---

[31] *Ժ. Խաչատրյան, Ա. Կանեցյան, Ի. Կարապետյան, Ի. Թրաինա. Արտաշատի 2003-2004 թթ. պեղումների արդյունքները, Հին Հայաստանի մշակույթը, XIII, Երևան, 2005 էջ 171, Ժ. Խաչատրյան. Մոնումենտալ կառույցի մնացորդներ..., էջ 229-231:*

[32] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, II, ԺԲ:*

[33] *Նույն տեղում, II, Ը:*

[34] *Նույն տեղում, II, Խ:*

[35] *Նույն տեղում, II, ԽԹ:*

[36] Г. Тираци н. Вопросы преемственности официального культа в античной Армении.– ВОН, 1985, № 10, с. 64.

[37] *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 778:*

Տիր աստծու մեհյանում և ավերում: Ագաթանգեղոսի հունարեն տեքստում ավելացված է, որ Ապոլոնի զոհարանը (մեհյանը) կոչվում է Տրիտիա[38]: Այսինքն՝ Տիրը համադրվել է Ապոլոնի հետ, և Արտաշատի մոտ գտնվող Ապոլոնի սրբատեղին դարձել է նաև Տիրի սրբատեղին: Տիրի մասին դա առաջին և միակ վկայությունն է[39]: Տիրը հայկական պանթեոն է մտել, ըստ երևույթին, Արշակունիների օրոք, քանի որ նրա ավելի վաղ գոյության մասին ոչ մի տեղեկություն չունենք: Նա Ապոլոնի հետ համադրվել է իբրև արվեստի, ճարտասանության աստված, իսկ Հերմեսի հետ՝ որպես գուշակություն անող[40]:

Ագաթանգեղոսի վերոհիշյալ վկայությունից ելնելով՝ ենթադրվում է, որ Տիրի տաճարը՝ Երազամույն վայրը, պետք է լինի անպայման Արաքսի ձախ ափին: Անվանի գիտնական Ս. Երեմյանը Երազամույն վայրում գտնվող Տիր–Ապոլոնի տաճարը նախ տեղադրում է Վաղարշապատի արևելյան դարբասից՝ Արեգ դռնից դուրս եկող, Արտաշատ տանող ճանապարհին, այժմյան Զվարթնոցի տեղում[41], իսկ հետո՝ Դվինում: Անուղղակի տվյալները ցույց են տալիս, որ Տրդատ I-ը, հետևելով իր տոհմի նախորդների ավանդույթին, իր գահակալությունը սրբագործելու համար մայրաքաղաք Արտաշատի հյուսիսային արվարձաններում հիմնում է սրբավայր, որը պետք է կոչվեր «Դուին–Ասաակ»: Ագաթանգեղոսի տեղեկություններից երևում է, որ Ասաակ արվարձանում հիմնված տաճարը նվիրված էր Տիր աստծուն և «իբրև ուսման ճարտասանության» ու «երազահան պաշտաման Տրի դից» կոչվում էր «Երազամոյն»: Սրա ուխտի օրը Տրդատ I-ը սահմանում է հայկական ամսի 17-րդ օրը, որը այնուհետև կոչվում է «Ասաակ»: Այս տաճարի շենքը պետք է լինի Դվինի պեղումների ժամանակ հայտնաբերված՝ I դարում կառուցված եռանավ բազիլիկան, որը քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո դարձել է քրիստոնեական տաճար[42]: Այս տեսակետն ունեցավ իր հետևորդ-

---

[38] Agathangelus und der Akten Gredors von Armenien.– Neu herausgegeben von Paul de Lagarde. Gottingen, 1887, s. 65. 22. *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. Պատմություն Հայոց, աշխարհաբար թարգմ. ներած. ու ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյան, Երևան, 1977, էջ 14, ծան. 35:*

[39] *Այս հարցին մանրամասն անդրադարձել ենք մեր «Իրանա-հայկական դիցաբանական աղերսների հարցի շուրջ» հոդվածում [ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), 1981, № 2, էջ 58-61], ուստի հարկ չենք համարում այստեղ նորից մանրամասն խոսել:*

[40] Н. Э м и н. Очерки религий и верований языческих армян. М., *1864,* с. *26; Ղ. Ա լ ի շ ա ն. Հին հաւատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 288-295:*

[41] С. Т. Е р е м я н. Развитие города и городской жизни в древней Армении.– ВДИ, 1953, № 3, с. 22.

[42] *Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ), հ. 1, Երևան, 1971, էջ 761, 826, հ. 2, Երևան, 1984, էջ 83, ծան. 12:*

ները[43]: Դվինի բազիլիկան մ. թ. I դ. չի պատկանում, այլ V դ. 80-ական թվականներին[44]:

Մի շարք գիտնականներ դեռևս մինչև 1950-ական թվականներն անդրադարձել էին Դվինի հիմնադրման ժամանակին վերաբերող հարցերին և Մովսես Խորենացու վկայությանը: Աս. Շահնազարյանն իր մենագրության մեջ հատուկ քննության առարկա է դարձրել այն բոլոր աղբյուրները, որոնք հիշատակել են Դվինը մինչև մարզպանական Հայաստանի մայրաքաղաք դառնալը: Հերքելով այդ աղբյուրների հավաստի լինելը, նա իրավացիորեն շեշտում է, որ Ագաթանգեղոսի, Կորյունի, Ղազար Փարպեցու և Եղիշեի մոտ Դվինն ընդհանրապես չի հիշատակվում[45]: Ա. Տեր-Ղևոնդյանը Ագաթանգեղոսի աշխարհաբար թարգմանության մեջ շեշտում է, որ Տիր աստծու Մեհյանը Արտաշատի մոտ էր[46]: Հ. Մանանդյանը նշում է, որ «...Տիր աստծու, այսինքն հունական Ապոլոնի արձանը գտնվում էր Արտաշատից ոչ հեռու, մեծ ճանապարհի մոտ»[47]: Այս տեսակետին մենք հանգամանորեն անդրադարձել ենք մեր աշխատություններում, ցույց ենք տվել, որ քաղաքից դուրս չի նշանակում քաղաքից հեռու: Իբրև հավանական վայր նշել ենք Արաքսի աջ ափին գտնվող մեծ բլուրը, որի կողքով է անցնում Տափերական կամրջով դեպի հարավ, արևելք և արևմուտք տանող գլխավոր առևտրական ճանապարհը[48]:

2003–2004 թթ. Արտաշատի հարթավայրային հյուսիսարևմտյան մասում, Արաքսի ձախ ափին, 70–80 մ հեռավորությամբ բացվեցին միաշար կրաքարերով, ռուստիկում մշակումով, ծիծեռնակապոչ կապերով ամրացված հենապատի հյուսիսային և արևելյան պատերը: Հայտնաբերվեցին տորաձև և ատտիկյան խարիսխներ, հարթ ու մատնեքավոր սյուների բեկորներ, քիվի եռանկյունաձև բավականին մեծ քար՝ ատամնավոր, ձվաձև բարձրաքանդակներով: Ենթադրվեց, որ այստեղ մ. թ. ա. II դ. կրաքարե շքեղ հենապատով կառուցված բարձր հարթակի վրա վեր է խոյացել Արտաշատ մայրաքաղաքի մոնումենտալ հասարակական կարևոր համալիրներից մեկը: Հարց է ծագում, թե դա արդյոք Մովսես Խորենացու

---

[43] *Գ. Քոչարյան. Դվինը անտիկ դարաշրջանում.– ՊԲՀ, 1979, № 2, էջ 272-277, Գ. Գ. Քոչարյան. Դվին III, Դվինը անտիկ դարաշրջանում, Երևան, 1991, էջ* 5-8, Г. А. Тирацян. О некоторых особенностях основания города Двин.– Третий всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на востоке. Тезисы докладов. Ереван, 1988, с. 85-86; *նույնի՝* Культура древней Армении, VI в. до н. э. – III в. н. э., Ереван, *1988,* с. *157-158; Ա. Քալանթարյան. Դարձյալ Դվինի հիմնադրման մասին.– ԼՀԳ, 1988, № 1, էջ 63-70:*

[44] *Կ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները, I, Երևան, 1952, էջ 97-98, Կ. Գ. Ղաֆադարյան, Ա. Ա. Քալանթարյան. Դվին III, Դվին քաղաքը և նրա պեղումները (1973-1980 թթ.), Երևան, 2002, էջ 42-43:*

[45] А с. Шахназарян. Двин, историко-географический очерк. Ереван, 1940, с. 7–25.

[46] *Ագաթանգեղոս, ծանոթ. 35:*

[47] *Հ. Մանանդյան. Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946, էջ 16-17:*

[48] *Ժ. Խաչատրյան. Հելլենիստական քաղաքաշինության որոշ ավանդույթների, Երազամույն վայրի և Դվին քաղաքի հիմնադրման մասին.– ԼՀԳ, 1987, № 2 էջ 46-57, նույնի՝ Հայաստանի անտիկ դարաշրջանի քաղաքներն ու քաղաքաշինությունն ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության».– ՊԲՀ, 1998, № 1-2, էջ 180-188, նույնի՝ Հին Արտաշատի տեղադրության հարցի շուրջ.– Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր, Երևան, 2001, էջ 42-48:*

հիշատակած, քաղաքից դուրս, ճանապարհին կառուցված Արեգ–Միհր–Ապոլոն–Հերմես–Տիրի տաճարը չէ[49]: Ն. Ադոնցը Կեղծ Պլուտարքոսից մի վկայություն է բերում Հայաստանում՝ Արաքսի մոտերքում գտնվող Դիորփոս կոչված մի լեռան մասին. «Դիորփոս լեռը կոչվել է մի ոմն Դիորփոսի անունով, որը ծնվել է քարից և սերմը ստացել Միթրայից, և որովհետև ուզեցել էր չափվել Արեսի հետ, Դիորփոսը սպանվեց վերջինի կողմից, ապա աստվածների կողմից փոխակերպվեց լեռան»[50]:

Մովսես Խորենացու վկայությունը, հավանաբար, վերաբերում է Արտաշես I-ի ժամանակ կառուցված քաղաքին: Հունա-հռոմեական աղբյուրները և վաղ միջնադարյան մեր պատմիչները քաղաքից դուրս կառուցված տաճարի մասին չեն հիշատակում: Բացի այդ, հենապատերի հիմքերը 6–7 մ ցածր են այսօրվա ռելիեֆի մակարդակից, և Արաքսը կարող էր այդ ժամանակ շրջանցել համալիրը արևելյան կողմից[51]:

Կորբուլոնի արշավանքի ժամանակ՝ մ. թ. 59 թ., համալիրն ավերվել է: Գրեթե նույն տարածքում Տրդատ I-ի օրոք (66 թ. հետո) կառուցվել է նոր հարթակ, շինարարական նոր տեխնիկայով, սև մարմարի սալ և զանգվածեղ քարերով կառուցված ցոկոլի վրա բարձրացել է ռուստիկում և հարթ մշակումով կրաքարե միաշար պատ: Բացվել է երկրորդ հարթակի հյուսիսային պատի մի հատվածը 10,6 մ երկարությամբ և արևելյանը՝ 36,3 մ, որից հետո այն թեքվում է դեպի արևմուտք[52] (12,2 մ): Այս պատի հետևում, ի տարբերություն հելլենիստականի, 1,2 մ լայնությամբ սև մարմարի և բազալտի անտաշ զանգվածեղ քարերով կառուցված է հզոր պատ՝ կրաքարե շարվածքի վրա հարթակի ճնշումը փոքրացնելու համար: Հարթակի արևելյան կողմում, գրեթե կենտրոնում, բացվել է 4,8 մ լայնությամբ վեց աստիճան, որը տանում է դեպի սրբազան հարթակ հյուսիսարևելյան հատվածի որմնանկարներով պատած (1–1,2 մ) մույթերով սրահը. տարբեր բարձրության մատնեքավոր 15 սյուները, կորնթոսյան և հոնիական խոյակների բեկորները, ատիկյան ու տորաձև խարիսխները, քանդակազարդ սալը և բեկորները, առյուծի գլխի ծորակով կաթսան, սկուտեղի հատակի բաց ֆոնի վրա կարմիրով արված ութթևանի վարդյակը, արծվի կրաքարե կարմիր ներկած աչքերով գլուխը խոսում են պաշտամունքային կառույցի, տաճարի և հարթակին կից շինությունների նշանակության մասին[53]: Կասկածից վեր է, որ հայտնաբերված տաճարը Արեգ–Միհր–Ապոլոն–Հերմես–Տիրինն է: Դրանով իսկ, ի վերջո, լուծվում է Երազամույն վայրի, Տիրի տաճարի, Ագաթանգեղոսի հունարեն վարքում նշված Արտաշատում գտնվող Ապոլոնի պատգամարանի տեղադրության հարցը:

---

[49] *Ա. Խաչատրյան, Ա. Կանեցյան, Ի. Կարապետյան, Ի. Թրաինա. նշվ. աշխ., էջ 168-172, նկ. էջ173-176, Ժ. Խաչատրյան. Մոնումենտալ կառույցի մնացորդներ…, էջ 218-239, նկ. 1-16:*

[50] *Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն: Մի հին պաշտամունքի հետքերը Հայաստանում, Երևան, 1972, էջ 371:*

[51] *Ժ. Խաչատրյան. Մոնումենտալ կառույցի մնացորդներ…, էջ 224-225, 231, նկ. 5,6:*

[52] *Ժ. Խաչատրյան. Նորահայտ մոնումենտալ շինություններ Արտաշատից..., էջ 31-32:*

[53] *Նույն տեղում, էջ 31-43, Ժ. Խաչատրյան. Մոնումենտալ կառույցի մնացորդներ…, էջ 222-231, նկ. 8-12, Ժ. Խաչատրյան. Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների..., էջ 9-11, աղ. VI, 4, VII2-5, VIII, 1-3, XII3:*

Ագաթանգեղոսի հունարեն վարքում նշված է, որ Արտաշատում կործանեցին Արտեմիսի տաճարը, այնուհետև Ապոլոնի պատգամարանը[54]: Դա նշանակում է, որ Արտաշատի Ապոլոնի սրբավայրում, ինչպես Արմավիրում, Անիում, Բագարանում[55] գուշակություններ էին արվում և երազներ էին մեկնաբանվում: Վերոհիշյալ կենտրոններում և, հավանաբար, մյուս տաճարներում գուշակությունների ընթացակարգը նույնությամբ պահպանվել է մինչև քրիստոնեության ընդունումը: Տրդատ I-ի օրոք կանգնեցվել է Տիրի արձանը, ինչպես Ասորիքի, Հիերոպոլսի ամենանշանավոր տաճարում, որտեղ, ըստ Լուկիանոսի[56] կային մի շարք աստվածների արձաններ:

Մերժելով գուշակության մյուս ձևերը՝ քրիստոնեությունն ընդունեց միայն երազների կանխագուշակությունը: Այդ են վկայում Տրդատ III-ի կերպարանափոխության առնչությամբ Ագաթանգեղոսի հաղորդած տեղեկությունները[57]: Շապուհ II-ի կողմից 368 թ., երբ ավերվեց Արտաշատը, քանդվեց նաև Խոր Վիրապի (VI բլուր) եկեղեցին և այնտեղ կառուցվեց ատրուշան: Վերջինս, ըստ Փավստոսի[58], ավերում է Մուշեղ Մամիկոնյանը: Ենթադրվում էր, որ դրանից հետո կյանքը շարունակվում է VI բլրի վրա և բլուրներից հարավ ու արևելք ընկած հարթավայրում: Վերականգնվում են VI բլրի պարիսպները, որպես առանձին ամրոց: Այդ են վկայում նաև 1999 թ. VI բլրի վրա կատարված պեղումների արդյունքները[59]: V դ. կեսերին, հատկապես Հազկերտ II-ի օրոք (439–457 թթ.), կրկին սաստկացան քաղաքական և կրոնական ճնշումները Հայաստանի վրա: Պարսիկները գրավել էին Հայաստանը, Արտաշատում նորից ատրուշան է կառուցվում: Ապստամբած ժողովուրդն ավերում է պարսիկների գրաված բերդերն ու ավանները, նախ մեծ Արտաշատը՝ իր ավաններով, հրկիզում է «կրակի պաշտամունքի տեղերը», գրավում է ատրուշանների սարք ու կարգը, բերում, դնում է եկեղեցում, և սուրբ քահանաների միջոցով նվիրում ի ծառայություն տերունական սեղանի: Արտաշատում և մյուս վայրերում ատրուշանների տեղում կրկին կանգնեցնում էին «Քրիստոսի փրկական խաչը»[60]: Դրանից հետո Արտաշատն ավերում է Վասակը: Հազկերտ II-ին պատասխան գրելու համար (449 թթ.) հոգևորականները, նախարարներն ու ժողովուրդը, ինչպես նաև պարսկական զորքերին ընդառաջ գնալու հա-

---

[54] *Ժ. Խաչատրյան. Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների..., էջ 10, Մովսես Խորենացի, II, 22, Ագաթանգեղոս, ծանոթ. 35, էջ 175:*

[55] *Ժ. Խաչատրյան. Ուրարտա-հայկական պաշտամունքային առնչություններ.– «Բանբեր Երևանի համալսարանի», 1998, №3, էջ 74:*

[56] Лукиан. О сирийской богине. 34, 35, 38.– Собрание сочинений. Т. II, М.–Л., 1935 (перевод под ред. с комм. Б. Л. Богаевского).

[57] *Ագաթանգեղոս, § 214, 216, 794, 811, 813:*

[58] *Փավստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987, V, 1:*

[59] *Ժ. Խաչատրյան. Արտաշատը հայոց դարձի նախօրեին և հետո.– «Էջմիածին», 2002, Ժ, էջ 60:*

[60] *Եղիշեի Վարդանանց պատմությունը (թարգմ. և ծանոթ. Ե. Տեր-Մինասյանի), Երևան, 1958, III, 65, VI, 117:*

մար (դեպի Ավարայր) հայկական զորքերը հավաքվում են «թագավորանիստ վայր Արտաշատում»[61]:

Վահան Մամիկոնյանը մարզպան դառնալուց հետո (485 թ.), ըստ Վարդան Արևելցու, կառուցել է Շապուհ II-ի կողմից (368 թ.) ավերված Արտաշատի եկեղեցիները[62]: Ասողիկի վկայությունից երևում է, որ պարսիկները Դվինում, հավանաբար նաև Արտաշատում (Խոր Վիրապում) ու այլ վայրերում ատրուշաններ են կառուցել: Այս քաղաքականությունն էլ պատճառ է դառնում, որ հայերը 572 թ. ոտքի կանգնեն պարսիկների դեմ՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ[63]: Արտաշատը VII դ. կաթողիկոսարանի դաստակերտներից մեկն էր[64]: Ասողիկը հաղորդում է, որ Ներսես Գ Շինարար կաթողիկոսը (641–661 թթ.) Խոր Վիրապում եկեղեցի է կառուցել[65], որը տեսել և նկարագրել է արաբ մատենագիր Ալ-Մուկադասին: Ըստ նրա՝ դա եղել է «...սպիտակ տաշված քարերից շինած ութ սյուների վրա (նստած) գմբեթաձև գլխարկի նմանվող մի եկեղեցի, որի մեջ գտնվում է Մարիամ կույսի նկարը... որ դռնից էլ (ներս) մտնես (եկեղեցի), դու կտեսնես Մարիամ կույսի պատկերը»[66]: Ս. Խ. Մնացականյանը գտնում է, որ Ալ-Մուկադասու նկարագրած եկեղեցին «ութ սյուների վրա բարձրացող կենտրոնագմբեթ կառուցվածք է, որի արևելյան աբսիդում եղել է աստվածածնի որմնանկարը կամ, որը ավելի հնարավոր է խաչանկարը»[67]: Կիրակոս Գանձակեցին նշում է, որ տաճարն ավերել են տաճիկները. «շինեալ և զսուրբն Գրիգոր, զզարմացուցիչն տեսողաց, յետոյ աւերեցաւ ի տաճկաց»[68]:

920-ական թվականներին Խոր Վիրապը դառնում է պատերազմի թատերաբեմ, որտեղ Աբաս թագավորը և Վասպուրականի Գագիկ Արծրունին փայլուն հաղթանակ տարան արաբների դեմ[69]: Բյուզանդական բանակը 1074 թ. հաղթեց Դվինի ամիրա Աբու-Ասվարին և գրավեց Սուրմառիի, Ամբերդի, Խոր Վիրապի ամրոցները[70]: Նշանակում է՝ Խոր Վիրապի բլրի պարիսպները այդ ժամանակ դեռևս կանգուն են եղել:

XII դ. վերջին և XIII դ. սկզբին հայ-վրացական միացյալ զորքերը Հայաստանն ազատագրեցին թուրք–սելջուկներից, որից հետո այն անցավ Իվանե Զաքարյանի

---

[61] *Նույն տեղում, II, 65, V, 91:*

[62] *Հ. Շ ա հ խ ա թ ո ւ ն ե ա ն. Ստորագրութիւն կաթողիկէ Ս. Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. II, Էջմիածին, 1842, էջ 278: Մ. Հ ա ս ր ա թ յ ա ն. Հայոց դարձի նախ ասկիզբ, սրբավայր Խոր Վիրապի վանքը.– «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001, էջ 184:*

[63] *Վարք եւ վկայաբանութիւն սրբոց հատընտիր քաղեալք ի ճառընտրաց, հ. I-II, Վենետիկ, 1874, էջ 125, Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 84, ՀԺՊ, հ. II, էջ250-257:*

[64] *ՀԺՊ, հ. II, էջ 322:*

[65] *Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, էջ 80:*

[66] *Ս. Խ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 18-19:*

[67] *Նույն տեղում, էջ 20:*

[68] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 61:*

[69] *Թովմայի վրդ. Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Տփղիս, 1917, էջ 299-302, ՀԺՊ, հ. III, Երևան, 1976, էջ 63:*

[70] G e o r g i u s C e d r e n u s. Historiarum compendium. Bonnae, II, 1839, p. 561; *ՀԺՊ, հ. III, էջ 430:*

իշխանության տակ: Վերջինիս հրամանով Արարատյան նահանգի առաջնորդ տեր Դավիթը Խոր Վիրապում կառուցում է Կաթողիկե եկեղեցին և վանական համալիրի պարիսպները[71]:

Խոր Վիրապի ամենանշանավոր շրջանը կապված է ուսուցչապետ Վարդան Արևելցու (մահ. 1271 թ.) գործունեության հետ, որն այստեղ հիմնում է բարձր տիպի դպրոց՝ վարդապետարան[72]: Դպրոցը 1260 թ. արդեն մեծ համբավ էր վայելում: Խոր Վիրապ սովորելու էին գալիս Հայաստանի և Կիլիկիայի տարբեր գավառներից: Այստեղ ուսանել է շուրջ 40 աշակերտ: Թեև Վարդան Արևելցու մահից հետո Խոր Վիրապի դպրոցի հետագա գործունեության վերաբերյալ տեղեկություններ չկան, սակայն մեզ հայտնի է տարբեր ժամանակներում գրված (XIII, XIV, XVI–XVIII դդ.) 12 ձեռագիր[73]:

1679 թ. հունիսի 4-ի ուժեղ երկրաշարժի ժամանակ այլ հուշարձանների թվում ավերվում է նաև Խոր Վիրապի Ս. Աստվածածին եկեղեցին, պարիսպները և նրան հարող շինությունները[74]: Դրանց վերականգնմանը ձեռնամուխ է լինում Դավիթ Վիրապեցին, որը 1695 թ. մահանում է, որից հետո այն իր ավարտին է հասցնում նոր վանահայր Վարդապետը[75]: Կյանքը Խոր Վիրապում կրկին աշխուժանում է Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք, որը հիշատակում է Խոր Վիրապի թեմին հարկատու գյուղերը[76]:

Մայրաքաղաքը և Մայր աթոռը 480-ական թվականներին թեև տեղափոխվեցին Դվին, սակայն Խոր Վիրապը դարձավ Արարատյան թեմի կենտրոնը, և իբրև նշանավոր սրբավայր և ուխտատեղի շարունակում է իր գործունեությունը:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հետ կապված Արեգ–Միհր–Ապոլոն–Հերմես–Տիրի տաճարի ավերման մասին Ագաթանգեղոսի վկայությունից բացի, դրա հետագա գոյության մասին ոչ մի գրավոր տեղեկություն չունենք: Ինչպես տեսանք, այդպիսիք վերաբերում են միայն Անահիտի տաճարին: Ապոլոն–Տիրի տաճարի տեղում եկեղեցի չի կառուցվել, և այն կորցրել է իր պաշտամունքային նշանակությունը: Նույնիսկ խաչքար չի հայտնաբերվել[77]:

Քաղաքի տարածական կառուցվածքում, ընդհանրապես, երբ այս կամ այն պատճառով տեղի է ունենում լրիվ կամ մասնակի փոփոխություն, կամ այն կորցնում է իր գործառնական անհրաժեշտությունը, փոխարինվում և ծառայեցվում է այլ նպատակի: Ինչպես, օրինակ, Պարթևական Դուրա–Եվրոպոս քաղաքի հրապարակը (ագորա), երբ դադարեց կատարել ժողովատեղի լինելու իր նախկին հիմ-

---

[71] A s h k. K a l a n t a r. The Mediaeval Inscriptions of Vanstan. Armenia, Neuchâtel-Paris. 1999, p. 12-13.

[72] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Արտաշատը հայոց դարձի նախօրեին..., էջ 64-65:*

[73] *Նույն տեղում, էջ 65, ծան. 62:*

[74] *Զաքարիա Սարկավագի Պատմութիւն, հ. II, Վաղարշապատ, 1870, էջ 104:*

[75] *Մ. Հ ա ս ր ա թ յ ա ն. նշվ. աշխ., էջ 189, Կ. Մ ա թ և ո ս յ ա ն. Խոր Վիրապի վանքը և նրա գրչության կենտրոնը.– «Էջմիածին», 1997, № 2, էջ178:*

[76] *Մ ի մ ե ո ն Ե ր ե ւ ա ն ց ի. Զամբռ, Վաղարշապատ, 1875, էջ 285:*

[77] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Նորահայտ մոնումենտալ շինություններ..., էջ 33:*

նական ֆունկցիան, վերածվեց շուկայի[78]: Պեղումները ցույց են տալիս, սակայն, որ VI բլրի, ինչպես Խոր Վիրապում, Ապոլոն–Տիրի տաճարի տարածքում կյանքը, թեև ընդհատումներով (ավերածություններով), շարունակվել է նույնպես մինչև XVI–XVII դդ., 1679 թ. հունիսի 4-ի երկրաշարժը, որից հետո այն չի վերականգնվել: Հնարավոր է, որ տաճարի տեղում կառուցվել է հասարակական շենք, որը մեզ չի հասել:

Արտաշատը հարյուրամյակներ շարունակ եղել է միջազգային առևտրի խոշոր կենտրոն: Ուստի, պատահական չէ, որ Հուստինիանոս I-ի (527–565 թթ.) կոդեքսում արտացոլված (408–409 թթ.) կայսերական էդիկտի համաձայն (Cod-justin-IV, 63,4) Բյուզանդական կայսրության և Պարսկաստանի միջև համաձայնագիր է կնքվել միջազգային ապրանքափոխանակություն կատարելու մասին. առևտուրը լինելու էր երեք քաղաքներում, որտեղ մաքսատներ կային՝ Բյուզանդիայում՝ Կալինիկումում (այժմ՝ Ռակկա Եփրատի վրա), Մծբինում, որն այդ ժամանակ Պարսկաստանի կազմում էր և Մեծ Հայքի մայրաքաղաք Արտաշատում[79]: Դվինը, V դ. վերջին մարզպանական կենտրոն դառնալով, անմիջապես չէր կարող ստանձնել առևտրական կենտրոնի դերը, այլապես Արտաշատի փոխարեն կնշվեր Դվինը: Արտաշատը, հավանական է ավանդաբար, միաժամանակ շարունակել է կատարել առևտրական կենտրոնի դերը: Միջազգային առևտրական ճանապարհն անցնում էր Տափերական կամրջով: Արեգ–Միհր–Ապոլոն–Հերմես–Տիրի տաճարը գտնվում էր Արաքսի ափին, կամրջի հարևանությամբ: Չէ՞ որ Հերմեսը կանգնեցվեց այդ ճանապարհին, որպես առևտրի աստված: Ամենայն հավանականությամբ, այս տարածքն է եղել քաղաքի առևտրական կենտրոնը: Այստեղ, բացի մյուս գտածոներից, հայտնաբերվել են նաև նուրբ կավե գնդիկներ, որոնք օգտագործվում էին զանազան գործարքներ կնքելու համար: Տաճարներն ունեին իրենց արհեստանոցները և ակտիվորեն մասնակցում էին միջազգային առևտրին: Հասարակական բաղնիքը վերածվել է քարավանատան: Այն ժամանակ առ ժամանակ ենթարկվել է մասնակի ավերածության, սակայն կրկին վերանորոգվել է: Այդ են վկայում աստիճանների, և բաղնիքի պատերի սև ու կարմիր տուֆի զանգվածեղ քարերով վերանորոգումները, պատերի (5 սմ) սվաղի կրկնակի հին և նոր շերտերը, համալիրից հայտնաբերված հարթ ապակու, բաժակների և օծանելիքի տարբեր տեսակի սրվակների, մինչև XVII դ. անջնարակ և ջնարակած, բաց դարչնագույն ու կարմիր կավից պատրաստված, տարբեր ձևերի, չափերի և նշանակության տեղական ու ներմուծված անոթների բեկորները և այլն:

Հյուսիսարևելյան հատվածում բացվող մույթերով սրահը, հնարավոր է, վերածվել է շուկայի: Արաբական աղբյուրներն Արտաշատն անվանում են «ներկարարների» քաղաք –AL-Qirmiz[80]: Օտար աղբյուրները սովորաբար գրում էին այն, ինչն

---

[78] Г. К о ш е л е н к о, А. А к о п я н. Градостроительство Армении и градостроительство Парфии.– Второй международный симпозиум по армянскому искусству. Сб. докладов, Т. I. Ереван, 1978, с. 251.

[79] Я. А. М а н а н д я н. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э. – XV в. н. э.). Ереван, 1954, с. 108; *ՀԺՊ, I, էջ 809-810, ծան. 52, 53:*

[80] Б а л а д з о р и. Книга завоевания стран, пер. Жузе. Баку. 1927, с. 10; С. Т. Е р е м я н. Торговые пути Закавказья в эпоху Сасанидов. По Tabula Peutingeriana.– ВДИ, 1939, № 1, с. 83.

իրենց համար նորություն էր կամ տվյալ երկրին բնորոշ էր: Կարծում ենք, բացի որդան կարմիրով, նաև այլ գույնի ներկերով ներկող ներկատներ կային, որոնք արտահանում էին ինչպես իրենց ներկած արտադրանքը, այնպես էլ որդան կարմիրը: Անկասկած, կային նաև այլ կարգի արհեստանոցներ: Երբ Դվինը ճանաչվեց առևտրական նոր կենտրոն, Արտաշատի այս հատվածը վերածվեց քարավանային միջանկյալ կայանի Վաղարշապատի և Դվինի ճանապարհին: Այսպիսով, Ապոլոն–Տիրի տաճարի և կից համալիրների պեղումների արդյունքները բացահայտում են Արտաշատի, ինչու չէ, նաև Հայաստանի պատմության ու մշակույթին վերաբերող անհայտ նոր էջեր՝ քաղաքաշինության, շինարարական տեխնիկայի, կոմունալ տնտեսության, քաղաքային մշակույթի, կյանքի ու կենցաղի մակարդակի մասին:

Այսինքն՝ Հայաստանում ուշ անտիկ շրջանում ծանոթ էին նաև հունահռոմեական աշխարհում լայն տարածում ստացած կոմունալ տեխնիկայի նվաճումներից մեկին՝ բաղնիքների շինարարական սկզբունքներին, որը տարածում է ստանում նաև Հայաստանում: Այդ են վկայում Գառնիում, Վաղարշապատում, Սատաղում[81]*, Փառախտում*[82] *և հատկապես Արտաշատում հայտնաբերված մասնավոր ու հասարակական բաղնիքները: Բացի պեղված երեք բաղնիքներից, Արտաշատում հայտնի են ևս երեքը: Կարծում ենք, Արևմտյան Հայաստանի քաղաքներում և ամրոցներում նույնպես պետք է լինեին մասնավոր ու հասարակական բաղնիքներ:*

Կոմունալ նորամուծությունները նպաստեցին վաղ միջնադարյան, ինչպես քաղաքաշինության, ճարտարապետության, այնպես էլ խճանկարային արվեստի հետագա զարգացմանը: Վաղ միջնադարյան բաղնիքներ են բացվել Դվինում[83]*, Զվարթնոցում*[84]*, իսկ Ամբերդում*[85]*, Անիում*[86]*, Լոռի Բերդում*[87]*, Տաթևում*[88] *XI–XII դդ.: Խճանկար է եղել, ինչպես վերը նշվեց, Խոր Վիրապի VII դ. եկեղեցում, որը*

---

[81] T. B. M i t f o r d. Biliotti's Excavations at Satala.– Anatolian Studies, vol. XXIV, 1974, p. 221–244; *Ֆր. և Եվգ. Կյումոն Եղբարց Պոնտական ուսումնասիրություն, մասն բ, Հակոբոս Տաշյան. Վիեննա, 1919, էջ 359-369, Հ. Հ ա կ ո բ յ ա ն. Մեծ ու Փոքր Հայքերի սահմանագլխի հռոմեական ամրությունների համակարգը.– ՊԲՀ, 1986, № 4, էջ 152:*

[82] А. А. И в а н о в с к и й. По Закавказью. Материалы по археологии Кавказа, вып. VI. М., 1911, с. 38, рис. 22 с.

[83] *Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 136-138, նկ. 107:*

[84] *Թ. Թ ո ր ա մ ա ն յ ա ն. Նյութեր հայկական ճարտարապետության, հ. II, Երևան, 1948, էջ 96-107:*

[85] И. А. О р б е л и. Баня и скоромах XII века.– Памятники эпохи Руставели. Сборник Государственного Эрмитажа. Л., 1938, с. 159-170; И. М. Т о к а р с к и й. Архитектура древней Армении. Ереван. 1946, с. 163.

[86] Н. Я. М а р р. Ани. Л., 1934, с. 71, табл. XXXII; И. А. О р б е л и. Краткий путеводитель по городищу Ани (Анийская серия, № 4). СПб., 1920, с. 14.

[87] *Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 136, ծան. 1:*

[88] А. Л. Я к о б с о н. Из истории средневековой архитектуры в Крыму.– Советская археология. 1946, VIII, с. 275-278, рис. 14; *Ն ո ւ յ ն ի՝* Средневековый Херсонес (XII–XIV вв.).– Материалы и исследования по археологии СССР, № 17. М.–Л., 1950, с. 82

տեսել է արաբ մատենագիր Ալ-Մուկադասին[89] (X դ., Աստվածամայրը մանուկ Հիսուսը գրկին), իսկ Դվինում V դ. վերջի Կաթողիկե եկեղեցու հատակի խճանկարը (երկ. 160 սմ, լայն. 65 սմ), բաղկացած է հինգ գույնի քարերից՝ մուգ սրճագույն, կարմիր, կանաչ, դեղին և սպիտակ: Եկեղեցու արևելյան աբսիդի քարերի վրա գտնվել է նաև Տիրամոր խճանկար պատկերը (VII դ.), որը, սակայն, խճանկար հատակի հետ կապ չունի: Ըստ Կ. Ղաֆադարյանի՝ V դ. խճանկարներն ունեն երկրաչափական ձևեր, իսկ VII դարինը՝ կոմպոզիցիոն նկար[90]:

ХРАМ В АРТАШАТЕ В МЕСТНОСТИ “ЕРАЗАМУЙН” И ПРИЛЕГАЮЩИЕ КОМПЛЕКСЫ

ЖОРЕС ХАЧАТРЯН

Р е з ю м е

Арташатская археологическая экспедиция в 2007 – 2008 гг. продолжила раскопки комплекса общественной бани на юго-восточном участке второй площадки (вторая половина I в.) храма Аполлона – Тира на берегу р. Аракс. В дополнение к трем раскопанным ранее помещениям раскопано еще семь. Последние также имеют подвальные помещения с гипокаустом. Раскрыта система водоснабжения и водоотвода. Стены и полы всех помещений были покрыты водонепроницаемой штукатуркой, полы помещений украшены мозаикой. Мозаика во II–VI помещениях из белого фельзита, окруженного темносиним поясом. Мозаика в VIII и IX помещениях отличается многообразием цветовой гаммы и богатой деталировкой. Реконструкция композиции мозаики VIII помещения напоминает богатый ковровый рисунок. Мозаика IX помещения сохранилась фрагментарно, тем не менее здесь так же очевидна богатая красочная гамма. Сохранились часть изображения человеческого лица, три буквы латинской надписи (VER), цветы, меандры и другие геометрические орнаменты. В помещениях VIII и IX найдены четыре фрагмента алебастровой фигуры птицы и ступня небольшой женской статуэтки из белого мрамора. Наличие ниш на стенах помещений V и IX свидетельствует, что помещения бани были украшены скульптурами и рельефами. Найдены части антаблемента храма, антовый камень, фрагмент коринфской капители, части 14 канелированных колонн (высотой 1,0 - 1,5 м, диаметр 64–72 см) и т. д. После провозглашения христианства государственной религией жизнь на территории комплекса продолжалась до землетрясения 4 июня 1679 г. Находясь на торговом пути, по соседству с мостом Таперакан, это место служило промежуточной караванной стоянкой на дороге в Вагаршапат и Двин.

---

[89] А л - М у к а д д а с и. Сборник материалов по описанию местностей и племен Кавказа. Вып. XXXVIII. Тифлис, 1908, с.16.

[90] *Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 97-98, նկ. 105, ն ո ւ յ ն ի՝ Դվին քաղաքը և նրա պեղումները, II, Երևան, 1982, էջ 16, նկ. 7 (V- VI դդ.);* B. N. A r a k e l i a n. Armenian Mosaic of the Early Middle Ages. Atti del Primo Simposio International di Arte Armenia, 1975. Venezia. S. Lazzaro. 1978, p. 2, fig. 3 (IV-V դդ.)

THE TEMPLE "YERAZAMUYN" IN ARTASHAT AND ADJACENT COMPLEXES

ZHORES KHACHATRYAN

S u m m a r y

The Artashat archaeological expedition in 2007–2008 continued excavations of the complex of public baths in the south-eastern section of the second area (the second half of the 1st century) of the Apollon–Tir temple on the bank of the Araxes. In addition to the three earlier unearthed rooms seven more rooms were excavated. The latter possess also basement-rooms with hypocausts. Water supply and draining systems of the whole complex were also excavated. The walls of the rooms, as well as the lower and the upper floors were covered with high quality waterproof plaster and the floors were decorated with mosaic. The mosaic of rooms II–VI are of white felzite, surrounded by a dark-blue belt. The mosaic of rooms VIII and IX is characterized by variety of colours and rich details. The reconstruction of mosaic composition of room VIII reminds a rich carpet image. The mosaic of room IX is remained only in parts, however here a rich colourful gamut is also evident. A part of a human face image has been remained, as well as three letters of a Latin inscription (VER), together with flowers, meanders and other geometric ornaments. In rooms VIII and IX have been found four fragments of an alabaster bird figure and a foot of a small female statue of white marble. The presence of niches on the walls of rooms V and IX attests, that the rooms of the baths were decorated with sculptures and reliefs. Parts of entablature of the temple, ante stone, a fragment of Corinthian capital as well as parts of 14 cannelured columns (1,0–1,5m height, with diameter 64–72cm) etc. also have been found. After declaration of Christianity as state religion, the life on the territory of the complex continued till the earthquake of June 4,1679. Being situated on trade road knots, in the neighborhood of the Taperakan bridge, this place served as intermediate caravan station on the road to Vagharshapat and Dvin.